Ն ա խ ա գ ի ծ

արձանագրային

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մասին

Հավանություն տալ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի մարտի 30-ի Հ.Ն. - 0773-1-ՀՕ-52 օրենքի 2-րդ հոդվածում՝

1/ 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններում և կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում կրթության և ուսուցման լեզուն գրական հայերենն է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։».

2/ 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով ուսուցման ոչ հանրակրթական և հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ կամ մասնակցությամբ»։

3/ 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում «հայոց լեզու» առարկայի ընդունելության քննությունը և ընթացիկ ուսուցումը պարտադիր է։

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց /այդ թվում՝ փախստականների/ ընդունելությունն ուսումնական հաստատություն, ինչպես նաև նրանց ուսուցման և դաստիարակության կազմակերպման լեզվական առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի `

1) 4-րդ հոդվածի 9-րդ մասում «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,» բառերը։

2) 7-րդ հոդվածը լրացնել 12-րդ և 13-րդ մասերով.

«12. Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն ՀՀ կառավարության համաձայնությամբ կամ մասնակցությամբ։ Սույն մասում նշված համաձայնեցման կարգը լիազորված մարմնի ներկայացմամբ՝ սահմանում է ՀՀ կառավարությունը։

13. Օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հիմնադրման համար անհրաժեշտ պայմանները (կրթական ծրագրեր իրականացնելու մասով), լիցենզավորման առանձնահատկությունները և ծրագրի իրականացումն ապահովող այլ իրավական ակտերը մշակում և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում լիազորված մարմինը։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված նախագծերի առաջադրման նպատակն է կարգավորել լեզվաքաղաքականության և կրթության բնագավառների օրենսդրության տեխնիկական հակասությունները, ինչպես նաև այն դարձնել առավել ճկուն և գործառնական՝ կրթության ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման տեսանկյունից։

Դեռևս 1993 թվականին ընդունված «Լեզվի մասին» օրենքում օգտագործված են «միջնակարգ-մասնագիտական», «մասնագիտական-տեխնիկական» հասկացությունները, որոնք հետագայում

վերանվանվել են։ «Բարձրագույն մասնագիտական կրթություն» հասկացությունը նախկինում ներառում էր նաև ասպիրանտական կրթությունը, իսկ ներկայումս դա սահմանված է որպես հետբուհական կրթություն և այլն։

ՀՀ սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունը իրականացնում է պետական քաղաքականություն կրթության բնագավառում։ Օրենսդրական այս նախաձեռնությամբ առաջարկվում է հնարավորություն տալ, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ և նրա կողմից սահմանված կարգով հիմնվեն Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով ուսուցման կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ, ինչը հնարավորություն կտա նոր որակական մակարդակի բարձրացնել կրթական ծրագրերի իրականացումը։ Միաժամանակ նախագծերը հնարավորություն են տալիս լիազոր մարմնին և ՀՀ կառավարությանը իրենց լիազորությունների շրջանակում ապահովել հսկողություն և վերահսկողություն նման կրթական ծրագրերի իրականցման նկատմամբ։ Գործող օրենսդրությունը ամբողջությամբ չի կարգավորում նշված հարաբերությունները։

Ներկայումս «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանափակում է միջազգային հեղինակություն ունեցող միայն հանրակրթական այլընտրանքային հաստատությունների մուտքը Հայաստանի Հանրապետություն, այն դեպքում, երբ որակյալ կրթություն ստանալու պահանջարկը մեծ է, իսկ արտերկրում դա ապահովելու հնարավորություն ունեցողներինը՝ քիչ։ Նաև այս նկատառումից ելնելով գործող օրեսդրությունը հնարավորություն է տվել բարձրագույն ուսումնական հաստատությունների մուտքը ՀՀ, սակայն «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը»։

Օրենքի ընդունումը կկարգավորի սովորողների սոցիալական խնդիրների և այլընտրանքային կրթություն ստանալու հնարավորության հարցը, վերացնելով առկա բացերը և հակասությունները։

Արմեն Աշոտյան